Հայտարարություն

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի կառավարման մարմնի և «Աջակցություն ԵՀԳ ԱՍՀ ծրագրերի իրականացմանը և կառավարմանը» ԵՄ ծրագրի (TESIM) հետ համատեղ կազմակերպում է Ծրագրի շրջանակներում գործընկերներ գտնելուն նվիրված համաժողով

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մեկնարկել է 2007թ.-ին: Ծրագրի հիմնական նպատակն է հասնել ամուր տարածաշրջանային համագործակցության և գործընկերության, խթանել Սևծովյան ավազանի հարակից շրջաններում տնտեսական և սոցիալական զարգացումը, համատեղ աշխատել համընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար, ինչպես նաև խթանել երկրների միջև համագործակցությունը: Ծրագրի շահառու են հանդիսանում ութ երկրներ՝ Բուլղարիան, Թուրքիան, Հայաստանը, Հունաստանը, Մոլդովան, Ռումինիան, Վրաստանը և Ուկրաինան:

Ներկայումս մեկնարկել է Ծրագրի նոր՝ 2014-2020թթ. շրջափուլը:

Այս փուլում Ծրագրի հավանական շահառուներ կարող են հանդիսանալ ՀՀ պետական կառավարման մարմինները, ՀՀ մարզպետարանները և քաղաքապետարանները, ՀՀ հասարակական կազմակերպությունները, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, մշակութային և հնագիտական ասոցիացիաները, զբոսաշրջության և տարածաշրջանային զարգացման գործակալությունները, հատուկ պահպանվող տարածքները և հետազոտական հաստատությունները:

Ծրագրի շրջանակներում վերոնշյալ շահառու կազմակերպությունները հնարավորություն են ստանում մշակել ծրագրի նախագիծ, այդ ծրագիրը իրականացնելու համար ընտրել գործընկերներ ԵՄ անդամ պետություններից և Ծրագրի շահառու հանդիսացող երկրներից, ստանալ ներկայացված ծրագրի բյուջեին համապատասխան ֆինանսավորում և համատեղ իրականացնել ծրագիրը:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ Ծրագրի կառավարման մարմնի և «Աջակցություն ԵՀԳ ԱՍՀ ծրագրերի իրականացմանը և կառավարմանը» ԵՄ ծրագրի (TESIM) հետ համատեղ կազմակերպում է Ծրագրի շրջանակներում գործընկերներ գտնելուն նվիրված համաժողով: Համաժողովի ընթացքում մասնակիցներին հնարավորություն կտրվի գտնել գործընկերներ՝ Ծրագրի անդամ հանդիսացող երկրներից: Համաժողովը տեղի կունենա ս.թ. հոկտեմբերի 23-ին՝ Երևանում:

Միևնույն ժամանակ, համաժողովին մասնակցելու հետաքրքրության դեպքում, խնդրում ենք շահառու կազմակերպություններին՝ մինչև ս.թ. սեպտեմբերի 7-ը գրանցվել https://blacksea-cbc.net/news/archive-news/partner-forum-in-yerevan-23-october-2018/ հղումով: